Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 10-ի N 939 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
«ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿՆՔՎՈՂ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գույք նվիրաբերողը	ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնք
Սեփականության իրավունք ձեռք բերողը (նվիրառու)	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումը կայացնելուց հետո 10-օրյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման և գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում է	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցներով:
Կողմերի պարտավորությունները	1. Նվիրաբերողը պարտավորվում է նվիրառուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից, փաստացի տիրապետումից ազատ հողամասեր: 2. Նվիրառուն պարտավոր է՝ 1) հողամասերն օգտագործել բացառապես ծրագրով նախատեսված ենթակառուցվածքների կառուցման նպատակով. 2) հողամասերում կառուցապատումներն իրականացնել նվիրաբերման պայմանագիրը կնքելու պահից մինչև 2033 թվականի սեպտեմբերի 30-ը. 3) բացառել իր կողմից, ծրագրի իրականացման ժամանակահատվածում, նվիրաբերման կարգով ձեռք բերված հողամասերի օտարումը, գրավադրումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ